ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻՑ ՀԱՅԵՐԻ 1949Ի ԱՔՍՈՐԻ ՄԱՍԻՆ

ՍԵԴԱ ԳԱԼՍՏԵԱՆ
sedagalstyan@yahoo.com

Հայաստանի պատմութեան թանգարանի (ՀՊԹ) ֆոնդերում պահուող ՀԿԿ Ա. քարտուղար Անտոն Քոչինեանի արխիւի ուսումնասիրութեան ընթացքում նկատեցինք կարեւոր մի փաստաթուղթ՝ Քոչինեանի ստորագրութեամբ, որը կարծում ենք լոյս կը սփռի նաեւ Բ. համաշխարհայինից յետոյ առաջացած իրավիճակի, աւելի որոշակի՝ 1946-48ի հայրենադարձութեան եւ 1949ի աքսորի ժամանակահատուածի վրայ: Փաստաթղթի որոշ մասեր տպուել են ամսագրերում, սակայն ամբողջական նիւթը գտնւում է ՀՊԹում: Նիւթի համակողմանի ուսումնասիրութեան ընթացքում պարզուեց՝ շատ քիչ ուսումնասիրողներ են անդրադարձել այս թեմային: ԽՍՀՄ քաղաքական ճնշումների՝ որոշ ժողովուրդների բաժին հասած աքսորների հետազօտութիւններում «հայկական բռնաքսոր»[1] սովորաբար չի քննարկուել: Ինչպէս ազգագրագէտ Հրանուշ Խառատեանն է նշում «*գործնականում չուսումնասիրուած այս խոշոր բռնաքսորը, որին ենթարկուեց հայ ժողովուրդը 1949թ. մնում է խորհրդային ռեպրեսիաների չբացայայտուած էջերից մէկը*»[2]: 1949ի զանգուածային աքսորմանը առաջին անգամ անդրադարձել է պատմաբան Ամատունի Վիրաբեանը, ում վկայութեամբ «*Հայաստանից այդ տարիներին արտաքսուել է 2754 ընտանիք, աւելի քան 12000 մարդ*»[3]: Ուշագրաւ է, որ 1949ին Հայաստանից աքսորման ենթարկուածներից միայն 17ն է այլազգի՝ 6 ասորի, 4 ադրբեջանցի, 4 յոյն, 2 ռուս, 1 քուրդ[4]: Վիրաբեանի պնդմամբ, այդ զանգուածային աքսորի վերաբերեալ փաստաթղթեր ընդհանրապէս քիչ են պահպանուել, չի ընդունուել նոյնիսկ ՀԿ(բ)Կ կենտկոմի կամ ՀԽՍՀ նախարարների խորհրդի համապատասխան որոշում աքսորուածների, այսինքն՝ նախապատրաստական աշխատանքներն իրականացուում էին խիստ գաղտնի պայմաններում: Պետանվտանգութեան նախարարութեան շրջանային բաժանմունքների պետերին, ովքեր անձամբ կազմում էին նիւթեր, ցուցակներ, որեւէ գրաւոր հրա-

---

[1] Հր. Խառատեան, «1949 թ. հայկական բռնաքսորը. Էթնիկ դեպորտացիա, թէ՞...», https://www.Iragir.am/2014/10/20/105544/:

[2] Г. Харатян, *Выселение армян навечно 1949 года, анализ и архивные документы* (1949ի հայերի ընդմիշտ աքսորը, վերլուծութիւն եւ արխիւային փաստաթղթեր), Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Երեւան, 2020, էջ 33:

[3] Ա. Վիրաբեան, «Փաստաթղթեր բռնագաղթի մասին», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 3:1990, էջ 68. նաեւ՝ *Երեկոյեան Երեւան*, 20 Յունիս 1988:

[4] Ա. Մանուկեան, *Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ*, «Առերեսում»-Անի հրատ., Երեւան, 1999, էջ 232:

հանգ չէր տրուել տեղեկանքներ կազմելու մասին, ստացել էին միայն բանաւոր ցուցումներ[5]: Ըստ պատմաբան Արմենակ Մանուկեանի, նման փաստաթղթեր 1998ի դրութեամբ չեն գտնուել նաեւ ՀՀ Ազգային անվտանգութեան նախարարութեան եւ ներքին գործերի նախարարութեան (ԱԱՆ, ՆԳՆ) արխիւներում: Պարզ է դառնում, որ դեռեւս «*1937թ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանամերձ շրջաններից Ղրղզստան եւ Ղազախստան են աքսորուել քրդեր եւ հայեր, իսկ 1939թ Ադրբեջանից քրդեր, հայեր եւ յոյներ են աքսորուել Ղազախստան*»[6]: Հետաքրքիր տուեալներ է հաղորդում Պաւէլ Պոլեանը՝ ԽՍՀՄում իրականացուած ժողովուրդների աքսորների մասին: Նա նշում է. «*Ղրիմից բուլղարների եւ յոյների հետ մէկտեղ հայեր են աքսորուել 1944թ Ուզբեկստան, 92000 մարդ՝ թուրք, մեսխէթցի, քուրդ եւ համշէնցի հայեր աքսորուել են Վրաստանից՝ Ուզբեկստան, Ղազախստան եւ Ղրղզստան*»[7]:

Ղրիմից աքսորուածների խնդիրը որոշ չափով լուսաբանում է 1949ի Մայիսի 29ի Ստալինի ստորագրութեամբ ԽՍՀՄ նախարարների խորհրդի «N 2214-856 յուժ գաղտնի որոշումը՝ «Վրացական, Հայկական եւ Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական հանրապետութիւններից, ինչպէս նաեւ Սեւ ծովի առափնեայ տարածքներից արտաքսուողների տեղափոխութեան, վերաբնակեցման եւ աշխատանքի տեղաւորման ապահովման մասին»[8]: Մանուկեանի վկայութեամբ, այդ փաստաթղթից յայտնի է դառնում, որ պետական անվտանգութեան մարմինների կողմից անց էր կացւում վերոյիշեալ տարածքներում բնակուող «*...դաշնակցականների, թուրքական քաղաքացիների, քաղաքացիութիւն չունեցող թուրքերի եւ խորհրդային քաղաքացիութիւն ընդունած նախկին թուրքական քաղաքացիների, յունահպատակների*» արտաքսումը: Ընդ որում, ինչպէս ընդգծում է Մանուկեանը, որպէս «*տարաբնակեցման վայր «դաշնակցականների» համար նախատեսւում է Ալթայի երկրամասը, թուրքերի համար՝ Տոմսկի մարզը, իսկ յոյների՝ Ղազախական ԽՍՀ հարաւղազախստանեան եւ Ջամբուլի երկրա-*

---

[5] Российский гос. архив социально-политической истории (РГАСПИ) (Ռուսաստանի ընկերա-քաղաքական պատմութեան պետական արխիւ (ՌԱՔՊՊԱ) ֆ.17,g.162,գ.40), էջ 140-41:

[6] В.Н. Земсков, *Спецпоселенцы в СССР. 1930-1960* (Վ. Ն. Զեմսկով, Բռնաքսորի ենթարկուածները ԽՍՀՄում. 1930-1960), Մոսկուա, 2003, էջ 82 (https; //www. pereplet.ru/history/Author/Russ/Z/Zemskov):

[7] П. Полян, *Не по своей воле...история и география принудительных миграций в СССР*, (Ոչ կամովի... հարկադիր միգրացիայի պատմութիւնն ու աշխարհագրութիւնը ԽՍՀՄում), Մոսկուա, 2001, էջ 247:

[8] Այս փաստաթուղթը Մոսկուայից բերել եւ տրամադրել է Վիրաբեանը: ՀԱԱ. ֆ. 1, g. 39, գ.65, թ.35, «Դէպի Սիբիր» hayrenadardz.org/hy/page/aksor Հայրենադարձութեան թանգարան:

մասերը»[9]: Հետաքրքիր եզրայանգման է եկել Ալթայի երկրամաս աքսորուածների ցուցակների հետազօտող Նատալիա Աբլաժէյը. ըստ նրա անփոփոխ է մնացել միայն «դաշնակ» արտայայտչաձեւը՝ դաշնակներ՝ 3620 ընտանիք, միւսները էթնիկացել են դառնալով՝ «յոյն», «թուրք»[10]:

Բ. աշխարհամարտում տարած յաղթանակը ոգեւորել էր սփիւռքահայութեանը, բարձրացել էր ԽՍՀՄի եւ Խորհրդային Հայաստանի հեղինակութիւնը: Հայաստանի ղեկավարութեան դիրքորոշումը հետեւեալն էր.- բարձրացնել Թուրքիայի բռնազաւթուած հայկական տարածքների (Կարսի մարզ, Սուրմալուի գաւառ) Խորհրդային Հայաստանին վերադարձնելու[11] եւ սփիւռքահայերի հայրենադարձութեան խնդիրները[12]: Դա իրականացնելու համար մշակուեց յատուկ ծրագիր[13], որտեղ կարեւորւում է նաեւ կաթողիկոս Գէորգ Չէօրեքչեանի նամակը՝ Ստալինին՝ 1945 Յունիսի 26ին[14], որում իր դերն ունէր նաեւ Սփիւռքը[15]: Հասկանալի է, որ առանց միութենական կառավարութեան որոշման, Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը ոչինչ չէր կարող ձեռնարկել: Հիմք ընդունելով նաեւ արտասահմանից ստացուող հազարաւոր դիմումները, նամակները (տե՛ս՝ Քոչինեանին գրութիւնը ստորեւ), հաշուի առնելով տիրող իրավիճակը ՀԿ/բ/Կ կենտկոմի Ա. քարտուղար Գրիգոր Յարութիւնեանը այս հիմնախնդիրը ներկայացրել է կենտրոնական իշխանութիւններին: «1946-1948թթ ներգաղթած հայերի քանակը կազմում էր մօտ 90000»[16]: Սակայն 1948 Սեպտեմբերին դադարեցուեց ներգաղթը, Ստալինը հրաժարուեց իր մտադրութիւնից. «...*Խորհրդային կառավարութիւնը յայտարարում է, որ Խորհրդային միութիւնը ոչ մի տարածքային պահանջ չունի Թուրքիայից*»[17]: Կարծում ենք Ստալինի վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ սառը պատերազմը եւ ԱՄՆի հովանաւորութիւնը՝ Թուրքիայի հանդէպ:

Չնայած Հայաստանը պատերազմից յետոյ գտնուել է ծանր վիճակում, սակայն արուել է ամէն ինչ՝ հայրենադարձներին օգնելու, բարուօք պայ-

---

[9] Մանուկեան, էջ 230:

[10] Н. Аблажей, “Депортация армян в Алтайский край в 1949г.,” (1949ի հայերի աքսորը Ալթայի երկրամաս), *Гуманитарные науки в Сибири* (Սիբիրի հումանիտար գիտութիւններ) 1(93):2011, էջ 47-48, (www.Iragir.am/2014/10/20/105544/):

[11] Ա. Վիրաբեան, «Հայաստանի հասարակական քաղաքական կեանքը յետպատերազմական ժամանակաշրջանում (1945-1957թթ) ատենախօսութիւն, Երեւան, 2001, էջ 68-69 (ՀԱԱ կուսարխիւ, ֆ.1,գ.28, գ. 135, էջ 11-14):

[12] *Հայոց պատմութիւն, հտր. 4, գիրք 2*, Զանգակ հրատ., Երեւան, 2016, էջ 98:

[13] ՀԱԱ, ֆ.1 գ. 26,գ. 44, թթ 176, գ. 45, թթ 407-410:

[14] Գաբրիէլ Լազեան, *Հայաստանը եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ*, Ադանա հրատ., Երեւան, 1991, էջ 349-53:

[15] ՀԱԱ, ֆ. 1, գ. 25, գ. 49, թ. 34:

[16] *Հայոց պատմութիւն, հտ.4, գիրք 2*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2016, էջ 98:

[17] ՀԱԱ, ֆ.1, գ. 28, գ. 74, թ. 113:

մաններ ստեղծելու համար: Բնականաբար թոյլ են տրուել նաեւ սխալներ, բացթողումներ, որն էլ ազդել է ներգաղթողների թուի կրճատման վրայ: ՀԿԿ կենտկոմի ատենի ղեկավարութեան «մեծագոյն սխալներից մէկը» համարուեց թոյլ պայքարը բուրժուական գաղափարախօսութեան, մասնաւորապէս բուրժուական ազգայնականութեան դէմ, քննադատուեց նաեւ «արեւմուտքի առջեւ խոնարհուելու» գործելակերպը: Այդ մասին մանրամասներ է հաղորդում ձեռագիր փաստաթուղթը[18], որը ՀԿԿ Ա. քարտուղարը յիշողութիւնների տեսքով յանձնել է թղթին մահուանից միքանի ամիս առաջ՝ 6 Փետրուար 1989ին, իր իսկ ստորագրութեամբ, հայերէնով: Ձեռագիրը կը ներկայացնենք հատուածաբար.-

...թւում էր մեր կուսակցութիւնն ու նրա ղեկավարները պէտք է ըստ արժանուոյն գնահատեն սովետական հիանալի ժողովրդի սխրանքը, ինտերնացիոնալիստական միասնութիւնն ու համախմբուածութիւնը, ինչը դարձաւ յաղթանակի անսասան պատուարը: Սակայն նոր էին լռել հրանօթների համազարկերը, երբ երկրի ղեկավարները, առաջին հերթին Ստալինն ու Բերիան արդէն սկսել էին ազգերից ընտրել այսպէս կոչուած անվստահելի անձանց՝ նրանց հետ հաշուեյարդար տեսնելու համար..: Պատերազմից անմիջապէս յետոյ հարց է դրուել կազմակերպել սփիւռքահայերի հայրենադարձութիւնը: Հայ բնակչութիւնը զանգուածաբար ցուցակագրւում էր հայրենիք վերադառնալու համար: Ցանկութիւն էին յայտնել աւելի քան 800 հազ[ար] մարդ տարբեր երկրներից, Լիբանանից, Սիրիայից, Եգիպտոսից, Յունաստանից, Ամերիկայից ու Ֆրանսիայից... Այն ժամանակուայ ղեկավարութիւնը Գրիգոր Յարութիւնովի գլխաւորութեամբ անհրեւակայելի ռիսկի դիմեցին՝ խնդրելով թոյլ տալ հայրենադարձութիւնը[19]:

ՀԿԿ առաջին քարտուղար Յարութիւնովը քաջ գիտակցել է, որ պատերազմում զոհերի թիւը բացասաբար կ'անդրադառնայ բնակչութեան վերարտադրութեան աճի վրայ եւ պէտք է այս առիթը օգտագործել հայ եղբայրներին ու քոյրերին հայրենիք վերադարձնելուն:

...Այստեղ կայ նաեւ մի ուրիշ հանգամանք, դա այն է, որ Սովետական երկրում, արտասահմանում գտնուած հայերին համարում են էմիգրանտներ, ոչ իրենց երկրից բռնի ուժով տեղահանուածներ, հայրենադարձութիւնը պատասխանում էր նաեւ այս հարցին: 1946թ սկսուեց հայրենադարձութիւնը, գրեթէ աշխարհի բոլոր երկրներից: Անասելի ծանր պայմաններում էր ընթանում եղբայրների ընդունելութեան գործը, գիւղերում պատրաստած բնակարաններից հրաժարւում էին, բոլորը ցանկանում էին տեղաւորուել Երեւանում, որոշ չափով Լենինականում ու Կիրովականում, իսկ այս քաղաքներում գրեթէ ոչ մի հնարաւորութիւն չկար: Այնուամենայնիւ հայրենիքը դժուար պայմաններում ընդունեց շուրջ 100 հազ[ար] հայ: ՀԿԿ կենտկոմի քարտուղար Գ. Յարութիւնովը դիմեց ՍՄԿԿ քաղբիւրոյին՝ հայրենադարձութեան առիթով Հայաստանին վերադարձնել Լեռնային Ղարաբաղը, որտեղ հնարաւոր կը լինէր բնակեցնել մեծ թուով հայերի: Երբ այդ մասին զեկուցում են Ստալինին, նա կարգադրում է հարցնել

[18] Տե՛ս՝ ՀՊԹ, նգպֆ մմ18816, բ/մ 3451:

[19] ՀՊԹ, նգպֆ մմ 18816, բ/մ 3451, էջ 4:

Ադրբեջանի կենտկոմի քարտուղար Բաղիրովի կարծիքը: Վերջինս նամակով պատասխանում է, որ ինքը համաձայն կը լինէր, եթէ Ղարաբաղի փոխարէն Հայաստանը Ադրբեջանին տար Բասարգեչարի, Կրասնոսելսկի, Վեդիի եւ Զանգիբասարի շրջանները: Բնական է, որ Հայաստանի ղեկավարութիւնը չէր կարող համաձայնուել Բաղիրովի աւանտիւրիստական նկրտումների հետ: Հայաստանի ղեկավարութիւնն առաջարկեց՝ թոյլատրել Հայաստանի ադրբեջանցիներին տեղափոխուել Ադրբեջան, իսկ նրանց բնակավայրերում տեղաւորել հայրենադարձներին: Հարկ է նշել, որ այդ ժամանակ Մուղանի դաշտի հսկայական տարածութիւնները դարձրել էին ոռոգելի, իսկ Ադրբեջանական հանրապետութիւնը աշխատուժի խիստ կարիք էր զգում, ստիպուած էր հաշտուել...[20]:

Երկու հանրապետութիւնների ղեկավարները սկզբունքօրէն համաձայնութեան են գալիս: «*Գ. Յարութիւնեանը տալիս է իր համաձայնութիւնը, եւ 1947թ Դեկտեմբերի 3ին երկու քարտուղարների ստորագրութեամբ նամակ է յանձնւում Ստալինին...*»[21], որի հիման վրայ Սովետական Միութեան կառավարութիւնը թոյլատրում է Հայաստանից ադրբեջանցիներին տեղափոխուել Ադրբեջան: Մեծ աշխատանք է տարուել հնարաւորինս արագացնելու տեղափոխումը, որպէսզի դատարկուող գիւղերը նախապատրաստէին հայրենադարձների բնակութեան համար: «*Այդ ժամանակ ես աշխատում էի ՀԿԿ կենտկոմի երրորդ քարտուղար, որոշ չափով գիտէի ադրբեջաներէն, այդ պատճառով յաճախ էի մեկնում ադրբեջանական գիւղեր՝ տեղափոխումը կազմակերպելու նպատակով: Շատ յաճախ գալիս էին Ադրբեջանի ղեկավարները, 2 անգամ Հայաստան եկաւ Բաղիրովը եւ ելոյթ ունեցաւ Զանգիբասարի շրջանի ադրբեջանցիների առջեւ*»[22]: Նրա հանդիպումից յետոյ տեղափոխումը շատ արագացաւ: Նշենք նաեւ, որ այդ առիթով մի տարուց աւելի Հայաստանում էր գտնւում Ադրբեջանի մինիստրների խորհրդի նախագահի տեղակալը՝ մի խումբ աշխատակիցների հետ: Ադրբեջանցիները տեղափոխւում էին կոլխոզներով ու սովխոզներով, իրենց հետ տանելով ամբողջ ունեցուածքը: Նոյնիսկ քանդում էին տները, տեղափոխում շինանիւթը, չնայած տների համար պետութիւնն արդէն վճարել էր: Ըստ Քոչինեանի՝ «...*Այդ տարիներին Հայաստանից Ադրբեջան տեղափոխուեցին մօտ 40,000 մարդ, իրենց հետ տանելով մօտ 800,000 ոչխար ու այծ, 300,000 գլուխ խոշոր եղջերաւոր անասուն*»[23]: Յետագայում, երբ Յարութիւնովին փոխարինել է Սուրէն Թովմասեանը, նախկին ղեկավարութեանը մեղադրել են ազգայնականութեան, ազգային քաղաքականութեան լենինեան սկզբունքների խախտման մէջ, կոչ է արուել ադրբեջանցիներին վերադառնալ Հայաստան, վերահաստատուել իրենց բնակավայրերում: Ադրբեջանցիները գրեթէ բոլորը վերադարձել են, այս անգամ

[20] ՀՊԹ, նգպֆ մմ 18816, բ/մ 3451 էջ 5:
[21] *Հայոց պատմութիւն, հտ 4, գիրք 2*, էջ 101:
[22] ՀՊԹ, նգպֆ մմ 18816, բ/մ 3451, էջ 6:
[23] Նոյն, էջ 7:

առանց ունեցուածքի՝ հանրապետութեան համար մեծ դժուարութիւն ստեղծելով: Նախկին բնակավայրերի մեծ մասը զբաղեցուած էր, միւսները վերածուել էին աւերակների: Վերաբնակները յամառօրէն պահանջում էին վարկ, անասուն եւ անասնագոմեր, դպրոցներ եւ այլ մշակութային օջախներ: Այդուհանդերձ արուել էր ամէն ինչ, պայմաններ ստեղծելու հայրենադարձների համար, սակայն ստացուել է հակառակը: Թողնելով տուն ու տեղ, անհամեմատ բարեկեցիկ կեանք, մարդիկ գալիս էին հայրենիք՝ նուիրուածութիւն դրսեւորելով խորհրդային կարգերի հանդէպ:

Սակայն ինչ կարելի էր սպասել ստալինեան բռնապետութեան ահեղ ժամանակաշրջանից: Դահճապետ Լ. Բերիան հայ լեգէոնների փաստն օգտագործելով, պատերազմի աւարտից անմիջապէս յետոյ կարգադրեց պետանվտանգութեան մինիստրութեանը լայնօրէն ստուգել հանրապետութեան բնակչութեանը, յայտնաբերել անվստահելի անձանց՝ աքսորելու նպատակով...: Այդ ժամանակ պետանվտանգութեան մինիստրը Ն. Կրիմեանն[24] (Քրիմեան) էր, ով այդ սեւ գործի հիմքը դրեց, «ստուգման» ենթարկուեցին տասնեակ հազարաւոր մարդիկ: Հարկ է նշեմ, որ Կրիմեանն իր հակաժողովրդական, իրօք դաժան գործերի համար յետագայում դատապարտուեց գնդակահարութեան: Աքսորման եւ առհասարակ «քննութեան գործի» մեծ մասը կատարուեց Սերգէյ Կորխմազեանի[25] օրօք, ով իր կատարած յանցագործութիւնների համար բանտարկուեց: Ցաւալին այն է, որ ստուգողների մեծ մասը այլազգից էին եւ Արեւմտեան Հայաստանում ծնուած բոլոր մարդկանց համարում էին արտասահմանում ծնուած եւ շատ աւելի խիստ էին մօտենում, քան միւսներին: Այդ տեսակէտից ահաւոր էր Լենինականում, որի բնակչութեան մեծամասնութիւնը Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերից էին, յատկապէս ղարսեցիները, նրանց նկատմամբ աւելի խիստ էին վարւում: Դաժանաբար էին վարւում այն ընտանիքների հետ, որոնցից մէկն ու մէկը բանտարկուել էր երեսնական թուականներին: Յիշում եմ Յունիսի 11ի Կիրակի օրը կենտկոմից մեքենան ուղարկեցին իմ հետեւից՝ շտապ ներկայանալու կարգադրութեամբ (նոյնիսկ դեռ չէի սափրուել): Վարորդի հետ եկած կենտկոմի աշխատողը ասաց, որ խորհրդակցութիւն է սկսւում, պէտք է շտապել: Այդ ժամանակ ես աշխատում էի կենտկոմի կադրերի գծով քարտուղար: Արագ հագնուեցի եւ ներկայացայ կենտկոմի բիւրոյի նիստերի դահլիճ, որտեղ հաւաքուած էին չեկիստի համազգեստով անծանօթ մարդիկ եւ հանրապետութեան ակտիւը՝ քաղկոմ շրջկոմների առաջին քարտուղարների մասնակցութեամբ: Խորհրդակցութիւնն անցաւ յուժ գաղտնի[26]:

Խորհրդակցութիւնում ելոյթ է ունեցել նաեւ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յարութիւնովը, ով նշել է «մաքրման» միջոցառման այսպէս կոչուած քաղաքական եւ պետական նշանակութեան մասին: Այս «մաքրման» միջոցառմանը գումարուել են «*1937ի աքսորից նոր-նոր հայրենիք վե-*

---

[24] Նիկիտա Արկադիի Քրիմեան (1913--55), պետանվտանգութեան ժողկոմ, նախարար (1945-47), գնդապետ:

[25] Սերգէյ Արկադիի Կորխմազեան (1912-74), պետանվտանգութեան նախարար (1947-52), գնդապետ:

[26] ՀՊԹ, նգպֆ, մմ18816,բ/մ3451, էջ 9:

ռադարձածները, գերմանական լեգէոններում ծառայած նախկին զինուորականները, ռազմագերիները, սովետական իրականութիւնից դժգոհ հայրենադարձները»[27]: Խորհրդակցութեան ժամանակ ելոյթ է ունեցել նաեւ ՀՍՍՀ պետանվտանգութեան նախարար Կորխմազեանը, ով «...*մանրամասն բացատրեց, որ արդէն հանրապետութիւն է ժամանել յատուկ զօրամասերի ստորաբաժանումներ, որոնք մէկ գիշերուայ ընթացքում կուսակցութեան ակտիւի օժանդակութեամբ պէտք է աւարտեն իրենց աշխատանքները: Նախօրօք պատրաստուած էին ցուցակները, թէ ակտիւից ով որ շրջանը, քաղաքը պէտք է մեկնի*»[28]: ՀԿ/բ/Կ Կրասնոսելսկի շրջանի քարտուղար Ս. Մարտիրոսեանը գրել է. «*Ամէնուրեք կազմուել է համապատասխան ակտեր եւ արտաքսման ենթակայ անձնաւորութիւնների կողմից տրուել է լիազօրագիր իրենց բարեկամների շարժական եւ անշարժ գոյքի վերաբերեալ*»[29]:

Բռնադատուածների վերաբերեալ կարճուած գործերը[30] գտնւում են Հայաստանի ազգային արխիւի ֆ.1191ում, որը հաստատուել է ՀԱԱի 01. 08. 05թ. թիւ 4 նիստի արձանագրութեամբ: Ֆոնդի 6րդ ցուցակում կան 2998 գործ՝ բոլորի անուն-ազգանուն-հայրանուններով, վերջինը՝ Յովհաննիսեան Խանահ Կարապետի: Քոչինեանը յիշում է. «*Ինձ ամրացրել էին Լենինականին: Խորհրդակցութիւնը վերջանալուց յետոյ խնդրեցի տուն գնալ հագնուել համապատասխան, քանի որ եկել էի անպատրաստ: Կտրականապէս արգելեցին: Մեկնեցինք անմիջապէս 2 զինուորական ջոկատների ղեկավարների հետ, ովքեր կցուած էին Լենինականին: Ամէն ինչ կատարւում էր խիստ գաղտնի, մեկնեցինք Յունիսի 12ին, Լենինականում քաղկոմի քարտուղարն էր Արմօ Հարենցը*»[31]: Այդ օրը հրաւիրել են կուսակցութեան գործուն անդամների խորհրդակցութիւն, որտեղ հաղորդում է տրուել պետանվտանգութեան նախարարութեան ներկայացուցչի կողմից: Բացի բոլոր փաստերից, աւելացուել է, որ աշխարհում սկսուած սառը պատերազմը պակաս կարեւոր չի նման «անվստահելի» տարրերից ազատուելու համար: Ըստ Վիրաբեանի՝ «*Արտաքսման պաշտօնական պատճառը, իբր «սառը պատերազմն» էր: Հնարաւոր հակամարտութեան դէպքում վախ կար, որ վերոյիշեալ մարդիկ կարող էին ծառայել թշնամուն: Իսկ իսկական պատճա՞ռը: Մեր խորին համոզմամբ դա ստալինեան դաժան քաղաքականութեան մի նոր դրսեւորում էր*»[32]: Յունիսի 14ի առաւօտեան Հարենցի հետ Քոչինեանը որոշել է տեսնել աքսորավայր ուղարկուողներին:

---

[27] Armtimes.com/hy/article/23984, 5.04.2021 :

[28] ՀՊԹ, նգպֆ, մմ18816,բ/մ3451, էջ 9:

[29] ՄԼԻ, ՀՄԿԱ (այսօր՝ ՀԱԱ) ֆ. 1, ց. 29, գ. . 125, թ. 3, բնագիր:

[30] Բռնադատուածների վերաբերեալ կարճուած գործեր, ֆ.1191, ց. 6:

[31] ՀՊԹ, նգպֆ, նոյն, էջ 9:

[32] Ա. Վիրաբեան,« 1949ի ցուրտ ամառը», *Երեկոյեան Երեւան*, 20 Յունիսի 1988:

Զինուորական պահակը չթոյլատրեց մօտենալ ապրանքատար վագոնների շուրջը հաւաքուած բազմութեանը: Իվերջոյ հրամանատարի թոյլտուութեամբ մօտեցանք այդ կատարեալ մղձաւանջին: Ամէնուր լաց ու կոծ, երեխաների ճիչ, զարմանք ու զայրոյթ, թէ ինչու են իրենց աքսորում..մի խօսքով՝ աննկարագրելի տեսարան: Երբ անցնում էինք վագոնների մօտով, մէկը բարձրաձայն տուեց իմ ազգանունը: Ետ նայեցի մի դեռահաս աղջիկ փորձում էր մօտենալ ինձ, զինուորականն արգելում էր: Մօտեցայ եւ հարցրեցի ինչ է պատահել: Աղջիկը յուզուած ասաց, որ իր եղբայրը՝ Մանասն է, որ ինքն ինձ տեսել է իրենց տանը դեռեւս կոմերիտական աշխատանքում եղած ժամանակ: Մանասին լաւ էի յիշում, պարզուեց նրանց ընտանիքը աքսորում էին, իսկ Մանասը 1 տարի առաջ զոհուել էր աւտովթարից[33]:

Աղջիկը յուզուած պատմել է, որ հայրը չի թողել որեւէ իր վերցնեն, որովհետեւ վստահ էր, որ թիւրիմացութիւն է եղել: Ինչպէ՞ս կարող են անմեղ մարդուն աքսորեն: Այդ օրը Քոչինեանին դիմել են շատ-շատերը, սակայն ոչնչով չի կարողացել օգնել: Այնուամենայնիւ 3 ընտանիքների ազգանուններն ու տուեալները վերցրել է: Կուսակցութեան Լենինականի քաղկոմում պետանվտանգութեան ներկայացուցիչն ու Լենինականի բաժանմունքի պետը՝ Մ. Կարապետեանը կտրականապէս մերժել են այդ 3 ընտանիքներին ազատելու խնդրանքը: «*Սփիպուած հեռախօսով դիմեցի կենտկոմի Ա. քարտուղար Գ. Յարութիւնովին: Նա շատ զայրացաւ, թէ ինչու եմ գնացել կայարան եւ խօսել աքսորականների հետ: Ապա ասաց, որ ինքը ոչինչ անել չի կարող, «դու ես ամրացուած Լենինականին, ինքդ էլ հարցերը լուծիր՝ քաղաքի ղեկավարների հետ խորհրդակցելով*»: Նորից ստուգել են տուել այդ 3 ընտանիքի տուեալները: Նախկին քարտուղարը խոստովանում է, որ ցաւօք արդէն մոռացել է ազգանունները: Իսկ ստուգումները պարզել են, որ նրանք միանգամայն անմեղ, աշխատաւոր մարդիկ են եղել: «*Իմ (Քոչինեանի - Ս.Գ.) պատասխանատուութեամբ կարգադրուեց երեքին էլ վերադարձնել իրենց տները*»[34]: Մարդիկ աքսորւում էին, գնացքի բեռնատար վագոններում մօտ երկու շաբաթ ճանապարհ անցնում, տեղաւորւում Ալթայի երկրամասի անտառային տնտեսութիւններում եւ սովխոզներում՝ չիմանալով ոչ իրենց մեղքը, ոչ էլ աքսորի պատճառը: Զանգուածային տեղահանութիւնն օրինականացուել է աւելի ուշ՝ 1949 Նոյեմբեր-1950 Յունիս ամիսներին: Աքսորուած ընտանիքի աւագի (կամ ընտանիքի այն անդամի ով աքսորի պատճառն էր) անունով ԽՍՀՄ ՊԱՆ առընթեր յատուկ խորհրդակցութիւնը կազմում էր հիմք համարուող փաստաթղթեր: «..*Բոլոր աքսորեալների մեղադրանքները գրեթէ նոյնութեամբ կրկնւում էին: Դա կամ նախկինում դաշնակցութեան կուսակցութեան անդամ լինելն էր, կամ «Հայկական լեգէոնում» ծառայելը*»[35]: Հետաքրքիր մի դրուագ էր եղել, որը

[33] ՀՊԹ, նգպֆ, մմ18816, բ/մ 3451, էջ 11:

[34] Նոյն:

[35] Մանուկեան, էջ 233:

զարմացրել է Քոչինեանին. երբ ստուգողները զեկուցել են, որ նրանք լիովին անմեղ են, բաժանմունքի պետը՝ Կարապետեանը զայրացած ասել է. «*Երեւում է՝ լաւ չեն ստուգել, չէ՞ որ նրանք ծնուել են արտասահմանում: Պարզուեց, որ ընտանիքի տարեց անդամներից մէկը՝ ծնունդով սարիղամիշցի է, միւս երկուսը՝ ղարսեցիներ են: Միայն այդ պահին իմացայ, որ Արեւմտեան Հայաստանում ծնուածների նկատմամբ առանձնակի խիստ վերաբերմունք է դրսեւորուել: Իմ ինքնագլուխ որոշումը էժան չնստեց: Ղեկավարութիւնը լրջօրէն կշտամբեց իմ արարքը, որակելով օպորտունիստական*»[36]: Յետագայում պարզուել է՝ նախարարութեան աշխատակիցները դաժանաբար են վարուել այն ընտանիքների հետ, ում անդամներից մէկն ու մէկը բանտարկուել էր 1930-40ականներին: Ահա այսպիսի գաղափարական ու գործնական սկզբունքներով էին ղեկավարւում պետանվտանգութեան նախարարութեան այն ժամանակուայ հայ աշխատակիցները, ստալինեան վարչադրոյթի դաժան պայմաններում օրինականացնելով իրենց գործողութիւնները:

Միայն Հայաստանում չէր, որ կատարուեց մաքրման «օպերացիա». բազմաթիւ անվստահելի հայեր յայտնաբերուեցին Ադրբեջանում, մասամբ էլ Վրաստանում: Երեք հանրապետութիւններից աքսոր ուղարկուեցին միքանի տասնեակ հազար անմեղ մարդիկ, ներառեալ կանայք, երեխաներ, ծերեր, տղամարդիկ: Ադրբեջանի ատենի կուսակցութեան կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը, ով հանդիսանում էր Բերիայի աջ ձեռքը, անգամ առանց ստուգումների աքսորավայր ուղարկեց բոլոր նրանց, ում չէր սիրում, կամ «իւրային» չլինելով՝ զբաղեցնում էին կարեւոր պաշտօններ: Այդ քայլով բացում էր աշխատատեղեր՝ իր մարդկանց տեղաւորելու համար:

> Զարմանալի մի դէպք էր եղել Լենինականում, որտեղ աշխատում էր Միշա Կարապետեանը: Նա պատմում էր, թէ ինչպիսի մեծ սխրագործութիւն է կատարել Լենինականում «թշնամիներին» յայտնաբերելու ժամանակ. պատկերացրէք Լենինականի այս մարդիկ չեն թաքցնում, իրենք ծնուել են արտասահմանում՝ Ղարսում, Վանում, Սարիղամիշում եւ այլն: Երբ զրուցակիցը առարկում է, թէ դա մեր հայրենիքն է, ինչպէս թէ նրանք ծնուել են արտասահմանում, Կարապետեանը պատասխանում է, թէ ես հնարաւորութիւն ունենայի գիտես քեզ էլ կը կցէի այս ցուցակի մէջ: Այդ (զրուցակիցը – Ս.Գ.) նուաստս՝ ես էի, ահա այսպիսի գաղափարական եւ պրակտիկ սկզբունքներով էին ղեկավարւում պետական անվտանգութեան կոմիտէի այն ժամանակուայ աշխատողները, դրանք աշխատողներ չէին, դրանք հայ անունը կրող ներքին դաւաճաններ էին, որոնք ստալինեան ռեժիմի տարիներին սրբապիղծ գործողութիւններ էին կատարում:
>
> Յիսնական թուականների սկզբներին հայրենադարձ հայերից գտնուեցին մարդիկ, որոնք չդիմանալով ստեղծուած ծանր պայմաններին, խախտելով պետական սահմանը, անցան արտասահման, վերադարձան իրենց նախկին բնակավայրերը: Այս փաստը շատ մեծ աղմուկ էր հանել հանրապետութեան աշխա-

[36] ՀՊԹ, նգպֆ, մմ 18816, բ/մ 3451, էջ 11բ:

տաւորութեան շրջանում. նրանք դատապարտում, անարգանքի սիւնին էին գամում փախստականներին: Պարզ է, որ այս երեւոյթի հանդէպ իրենց խօսքը պէտք է ասէին մեր կուսակցութեան ղեկավար մարմինները:
1953ի սկզբներին ՍՄԿԿ կենտկոմի քաղբիւրօն քննութեան առաւ սահմանախախտման դէպքերը: Հրաւիրել էին կուսակցութեան կենտկոմի քարտուղար Գրիգոր Յարութիւնովին եւ ինձ (այդ ժամանակ մինիստրների խորհրդի նախագահն էի): Քաղբիւրոյի նիստը ղեկավարում էր Բերիան, իսկ Ստալինը կողքի սեղանի մօտ կանգնած՝ զբաղուած էր իր ծխամորճով:
Բերիան կարդաց որոշման նախագիծը, որտեղ նախատեսւում էր խիստ նկատողութիւն յայտարարել Յարութիւնովին եւ ինձ՝ համապատասխան միջոցներ չձեռնարկելու համար: Նախագիծը կարդալուց յետոյ միքանի րոպէ տիրեց քարլռութիւն, քաղբիւրոյի անդամներից ոչ ոք ձայն չհանեց: Բոլորը սպասում էին Ստալինի խօսքին: Յանկարծ նա մօտեցաւ Բերիային, ապա Յարութիւնովին եւ հարցրեց (Յարութիւնովին), որքա՞ն մարդ էք ընդունել: Յարութիւնովը պատասխանեց. «Շուրջ 100,000 ընկեր Ստալին», Ստալինը նորից մօտեցաւ իր սեղանին, լցրեց տրուպկան ծխախոտով, վառեց ու մօտեցաւ Բերիային (սեւագրութեան մէջ նշել է Մոլոտովին – Ս.Գ.)՝ ասաց. «Եթէ դժոխքից 100,000 մարդ է տեղափոխուել դրախտ, կը գտնուեն այնպիսիք, ովքեր կը ցանկանան ապրել դժոխքում»: Ստալինի այս արտայայտութիւնից անմիջապէս յետոյ Բերիան առաջարկեց հարցը հանել քննարկումից, բաւարարուել առաջնորդի դիտողութիւններով: Մենք ազատուեցինք պատժից: Վերադառնալով Երեւան, ՀՀԿ կենտկոմը լուրջ միջոցառումներ մշակեց հայրենադարձների շրջանում քաղաքական-մասսայական աշխատանքներն ուժեղացնելու նպատակով[37]:



Ա. Քոչինեան ստորագրութիւնը 6 Փետրուար 1989, Երեւան[38]

1953ին, Ստալինի մահից յետոյ Հայաստանի ղեկավարութիւնը հարց է յարուցել 1949ին աքսորուածներին արդարացնելու մասին: «*Մինչեւ 1955թ Օգոստոսի 15ը յանձնաժողովը վերանայում է 1015 գործ եւ որոշում ընդունում «Յատուկ վերաբնակեցումից» ազատել 3074 մարդու*»[39]: Արտաքսուածների արդարացման գործերը աւելի արագացուել են Բերիային գնդակահարելուց յետոյ: 1955ին սկսուել է նրանց վերադարձը հայրենիք: «*1956թ. Փետրուարի 25ին ԽՄԿԿ XXրդ համագումարի օրերին, ՀԿ/բ/Կ կենտկոմի ղեկավարութիւնը խնդրանքով դիմեց ԽՄԿԿ կենտկոմ՝ քննար-*

[37] ՀՊԹ, նգպֆ., մմ18816, բ/մ 3451, էջ 12:
[38] ՀՊԹ, նգպֆ., մմ18816, բ/մ 3451, էջ 14:
[39] «Հայաստանից՝ Ալթայ, 5/04/2011, armtimes.com/hy/article/23984 :

կելու բոլոր բռնագաղթուածների արդարացնելու հարցը»[40]: «*Արդէն նրանցից շատ-շատերը չկային: Կլիմայական դաժան պայմաններին չդիմանալով նրանք բախտ չունեցան նորից տեսնելու իրենց արեւային հայրենիքը*»:

Կարծում եմ այս ամէնի ականատեսը լինելով պէտք է բացառուէին այլեւս անարդարութիւնները եւ բնութեան ամենաթանկ դրամագլխի՝ մարդու իրաւունքների ոտնահարումը մնար անցեալում: Աւա՜ղ....:

NEW DETAILS ON THE EXILE OF ARMENIANS FROM TRANSCAUCASIA IN 1949 (SUMMARY)

SEDA GALSTYAN
sedagalstyan@yahoo.com

In the process of researching the archive of the 1st secretary of the Communist Party of Armenia, Anton Kochinyan, kept in the Museum of the History of Armenia, our attention was drawn to one important manuscript signed personally by Kochinyan, which was written by the secretary a few months before his death in February 1989. This document covers not only the post-war period, repatriation in 1946-48, but also provides us with details about the mass exile in 1949. According to the evidence, 2754 families were deported to the Altai Territory. The value of this document lies in the fact that its author, being the 3rd secretary of the Communist Party of Armenia at that time, was personally in Leninakan and became acquainted with the situation. It is a regrettable fact that those born in Western Armenia - Kars, Sarikamish and other areas west of the Soviet Armenian border were considered foreigners and were subjected to deportation. The details presented allow us to draw conclusions and comment on the period using these new manifestations of Stalin's repressions and the Cold War.

[40] Վիրաբեան, էջ 68: